հունը հունաւորէն չի պարունակուիր: Ար  
դարեւ յառաջագոյն հինգ հացիւ և երկու  
ձկով հինգ հազար հոգի կերակրած ժամանա

կը սքանչելիք մ'ալ ցըցուց բազմութիւնը  
 կշտացնելէն զատ, որ է երկոտասան զամբիւղ  
 հացին եւելնալը, որով Առաքելոց քարոզու-  
 թեամբը և սքանչելեօքը հաւատացելոց շատ  
 նալը նշանակեց: Այլ յարութենէն ետքը  
 Առաքելոց հետ Տիբերեայ ծովուն եզերքը  
 հոց, ձուկ, և խորիսխ մեղու ճաշակեց. այն  
 տեղ ալ ճշմարտապէս Վարիամայ կուսէն ա-  
 ռած մարմնովը յարութիւն առնելուն հաս-  
 տատութիւն մը տալու համար էր. բայց այս  
 հիանալի կերակրոյն մէջ ամենեւին երեւելի  
 սքանչելիք մը չի ցուցունելուն՝ նոյն խորհրդ-  
 դեանը մէջ անհուն զօրութիւն բովանդակելն  
 էր. որովհետեւ անհուն զօրութիւնը հունա-  
 ւոր զգայութեան տակ չկնար, այն պատճա-  
 ռաւ չի ցըցուց Վրիստոս: Թէ և ծովը Աս-  
 տուծոյ անհունութեանը քով մէկ կաթիլ մի-  
 ջուր է. բայց մարդիկ նորա բովանդակու-  
 թեանը անգամ վերահասու չեն կրնար ըլլալ,  
 և միով հայեցիւք ամէն պարագաներով ե-  
 ղերքներովը անհնարին է որ տեսնեն. ապա  
 ուր կրմնայ Աստուծոյ անհուն զօրութիւնը  
 միով հայեցիւք տեսնել՝ թէ որ նորա մէջ  
 պարունակուած անհուն զօրութիւնը զգա-  
 յութեան տակ ձգել հնարաւոր ըլլար, ան-  
 հրնարին չէր ըլլար մահկանացու կենացս մէջ  
 զԱստուած՝ որպէս է յինքեան հայեցողա-  
 պէս տեսնիլը, « զԱստուած ոչ որ ետես եր-

բէք, բայց Միածին Արդին որ 'ի ծոց Հօր նա  
սրամեաց մեղ" . և "Աջ որ տեսանէ զերեսս  
խմ և ապրի" :

Հ. Աթէ այս խորհուրդին մէջ անհուն  
Մտուածային զօրութեամբը ներկայ գրտ-  
նուած ըլլար չի պիտի ըսեր, "Օյսս արարէք  
առ իմոյ յիշատակի" . որովհետեւ ինչպէս  
կրնայ ըսել, ինձի յիշեցէք ինքը հոն ներկայ  
եղած ժամանակը :

Պ. Հաւատովք ըսբանելի է այս ներկա-  
յութիւնը, քանզի աներեւոյթապէս է այս  
ներկայութիւնը, որովհետեւ Քրիստոսի Վար-  
միք և Վրիւնք՝ հացի և գինւոյ սրտաս-  
մունքներովք կը տեսնուի՝ Վութեամբ յեր-  
կինս իսկութեամբ 'ի ստորինս՝ աննուազ մարդ-  
կութեամբ և անթերի Մտուածութեամբ .  
որն որ զգացու թեան տակ ձգելը անհնար է .  
վանորայ յիշել հարկաւոր է, թէ այս ճա-  
շակածնիս՝ Քրիստոսի Վարմինն է . որ մեր  
փրկութեան համար իւր անձը զոհեց մահ-  
ուամբ, մեր կատարեալ հաւատով ճաշակե-  
լով զայս՝ և նորա փրկագործութեան արեան  
ցը ապաւինելով, թէ և Վաւիթ մարգարէն  
գիտէր և կը հաւատար, որ միշտ և հանա-  
սազ ներկայ էր Մտուած ամենայն ուրեք,  
բայց 'ի վերայ այսր ամենայնի կրտէ, "Յիշե-  
ցի զՄտուած և ուրախ եղէ" :

Հ. Հաւատովք սրտամեան է մք արդեօք,

որ հայցին և գինեոյն տեսակին ներքե Քրիստոս  
տասի ճշմարիտ Վարմանը և Վրիւնը ծածկեալ  
է, քանի որ մեր զգայու թիւնը զայն միայն  
հայ և գինի կը ճանչնայ :

Պ. Ա. յն, հաւատարու պարտական էմք .  
ինչու որ մարդուն մինակ մարմինը կը աւս  
նէմք, ու հոգի ունենալուն կը հաւատամք .  
միայն ինչ տեսակ բան ըլլալը չէմք տեսնել  
և բանականութեանը կը հաւատամք . զ՛ն  
տուած չէմք տեսնել՝ բայց նորա գոյութեան  
նը կը հաւատամք . Աստուծոյ շնորհքը շոգ  
ւոյն սրտգէր չէմք տեսնել և շնորհայ հա  
ւատ կընծայեմք . Արբորդութեան խորհուր  
դը միայնքնուս մէջ շխտովի՝ բայց էթէ քը  
րիտանեայ էմք՝ չէմք երկբայիր : Աւարեալք  
զՔրիստոս սակ մարդ տեսան, ինչպէս որ  
ուրիշ մարդ իկները աշխարհիս մէջ կը շրջին  
այնպիսի մէկ անձ մի էր տեսածնին, բայց  
մարդկային զգայարանօք . բայց դաւանու  
թիւն տուին . « Իսկ դուք զո՞ւսէք զինէն թէ  
իցեմ » ըսած ժամանակը, Պետրոս անկուռն  
բերնէն սքառասխանեց, « Իսկ ես Քրիստոս  
Արդի Աստուծոյ Անեղանելոյ » : Աորա Արդի  
Աստուծոյ ըլլալը ուր տեղ տեսան : Ահրտեալը  
իւր մկրտութեան զՔրիստոս կըզգենու վերըս  
տին ճննգեամք, « Արք միանգամ ՚ի Քրիստոս  
մկրտեցայք զՔրիստոս զգեցեալ էք » . Բայց  
անոր վրայ եղած հոգևոր փոխախու թիւնը

կրնանք տեսնել արդեօք, ըսես պիտի որ հոգևորը մարմինով չի քննուիր, այսպէս ալ իմացիր Հաղորդութեան Վարմնոց և Արեան խորհրդոյն վրայ ալ:

Հ. Քրիստոսի Վարմինը և Արիւնը միշտ կը ճաշակեմք, և անդադար կը հաղորդուին միլիոնաւոր հաւատացեալներ, ինչպէս չի հասնիր, քանզի Քրիստոսի գալստեանէն մինչև ցայժմ կը վայելէն և աշխարհիս մինչև վերջը կը հաղորդուին:

Պ. Քրիստոս անհուն և անչափ է, «Մեծ է Տէր և օրհնեալ է յոյժ և մեծութեան Աստուծոյ չափ», անասմանը սպառիչ չունենար, ասոր օրինակը միշտ աչքերնուս առջին է, որ է արեգակը, նայէ մէկ անգամ աչքը վերցուր, աշխարհիս սկիզբէն մինչև ցայժմ իր լուսաւորութիւնը կը բղխէ, և ջերմութեամբը բոլոր աշխարհիս տունկերը կը կենդանացնէ, սակայն նուազիչ չունի, նայէ Ասկիանոսը և բոլոր գետերը ամենեւին նուազած չեն, թէպէտ մշտնջենաւորապէս արեգակը դէպ ՚ի երկինքը կը քաշէ անոնց ջուրերը ու ամալ կը շինէ, ետքը ամալը ծանրանալով անձրև կ'ըլլայ բոլոր այգեստանները և անդաստանները կը ջրէ, և կենդանիներուն ծարաւը կը կշտացնէ, բայց ամենեւին երբէք ծովին սպառիլը տեսնուած չէ, ասոնք Աստուծոյ անհունութեանը առջև մէկ նշույլ մը

և մէկ կաթիլ մը ըլլալով սպառիչ չունին՝ Աստուծոյ ամենակարող ձեռաց գործը ըլլալուն համար : Արդ՝ այս խորհուրդս ալ հաստատողը նոյն Ամենակարող երկնի և երկրի ստեղծողն է . նա որ եթէ կամք ընէ՝ անսպառելի մնալու և այս խորհուրդը իր անհունութեանը հետ անբաժանելի կերպով կապէ , վախճան և ըստ սպառումն կրնայ արդեօք ունենալ . և ասոր կասկածելու և տարակուսելու արդեօք պատճառ մը կրնանք ունենալ , ամենևին ոչ :

Հ. Արդեօք ինչպէս Քրիստոս մեր ամենուն և հետ ալ կը միանայ ճաշակելովն զայն՝ և ՚ի Հօրէ Աստուծոյ անբաժանելի կը մնայ :

Պ. Ինչպէս մեր փրկութեանը համար աչխորհ եկած ժամանակը՝ իր Հօրմէն անբաժանելի էր և ընդ մարդկան շրջեցաւ , « Ես ՚ի Հայր և Հայր յիս է . » և ինչպէս կերգէ եկեղեցին « Այ՛ մեկնելով ՚ի Հօրէ ՚ի Սուրբ այրին բաղմեցաւ . » այսպէս ալ Հաղորդութեան ժամանակը : Յօհաննէս Աւետարանիչ հաւատացեալները համոզելու համար խիստ լաւ օրինակ ցըցուց , « Բանն մարմինն եղև » . ահա՛ Քրիստոսի Բան ըսելուն պատճառը . որովհետև երբ որ մարդու խօսքը միտքէն կը ծնանի և լեզուին միջոցաւը հաղարաւոր մարդկանց մտքին կը հաղորդուի , բայց նոյն բանը ծնողին միտքէն չի դատարկանար , անբաժանելի կը մնայ . ինչպէս ճառագայթը ամեն

անդ կը ծագէ կը լուսաւորէ, քայց արեգակնէն  
անբաժանելի է. այսպէս ալ Քրիստոս մեզի հետ  
և մեք՝ Նորա հետ կը միանանք. քայց ՚ի վերայ սյ-  
սրը ամենայնի ՚ի Հօրէն իւրակէ անբաժանելի է :

Մ. Ա. Մ. Ն. Բ.

ՍՐԲՈՅ ՊԱՏԱՐԱԳԻ ՎԵՐԱՅ

Հ. Յիսուս Քրիստոս Հաղորդութեան  
խորհուրդը հաստատած ժամանակը՝ նայն  
Մարմնայն համար որ ՚ի հացէն փոխարկեց և  
նայն Նրեանը համար որ ՚ի գինւոյն փոխար-  
կեց՝ ըսաւ «Օյս արարէք առ իմոյ յիշատա-  
կի » , երբ կը յիշուի այս խորհուրդը կատա-  
րուած ժամանակը :

Պ. Քահանայ Նստուծոյ՝ պաշտօնեայ նայն  
խորհրդոյն՝ երբ որ կը մատուցանէ սուրբ Պա-  
տարագը , Քրիստոսի խօսքերը «Նրէք կե-  
րէք » և Նրբէք ՚ի սմանէ ամենեքին » ըսե-  
լէն ետքը . կսկսի երկնաւոր Փրկչին կենսածիր  
Տնօրէնութիւնները մի առ մի յիշատակել ,  
հռչակել , և տսել . «Նը զսոյն միշտ իւր յի-  
շատակ առնել պատու իրան աւանդեաց մեզ  
բարեբար Ազգիդ .քո Միտմին , և իջեալ ՚ի ըս-

առի՛նն վայրս մահու մարմնամբն՝ զոր 'ի մերսէս  
 ընկալաւ յազգակցու թէնէ, և զնկզս դժոխս  
 ցըն աղարտեալ հզօրեղապէս՝ զՔեզ միայն  
 ծանօցց մեզ ճշմարիտ Աստուած՝ զԱստուածդ  
 կենդանեաց և մեռելոց : »

« Այլ արդ՝ մեք Տէր՝ ըստ այսմ հրամա-  
 նատրու թեան յառաջ բերեալ զայս խոր-  
 հուրդ փրկական Վարմնոց և Արեան Սիած-  
 նիքս . յիշեմք զգորս որ վասն մեր զփրկա-  
 գործ Չարչարանան, զկենսատու խաչելու  
 թիւնն, զերեքօրեայ Թաղումն, զերանելի  
 Հարու թիւնն, զԱստուածապէս Համբարձու-  
 մըն, զնստիցն ընդ աջմէքս Հայր, զահաւոր  
 և զփառաւորեալ զվիսանդամ գալուսան  
 խոստովանիմք և օրհնեմք : ( Ի խորհրդատեպոյն ) :  
 Ասկից կը մակարտուի, որ Աստուածա-  
 հատաստ Առաքելական ուղղափառ սուրբ  
 Ալեգեցին ըստ ամենայնի կը հեանելի սուրբ  
 Աւետարանին խօսքերուն, և Առաքելական  
 խրատներուն, և սրբայն Պօղոսի ըսածք չի  
 մտնար որ ուսոցց, « Քանիցս անդամ թէ  
 ուտիցէք զՀայս զայս և զՎաժակս ընկիցէք՝  
 զմահն Տեսան պատմեցէք միտելու եկեօցե  
 Նա » : Վայց ահա՛ սուրբ Պատարագի ժամա-  
 նակը՝ չէ՛ թէ Ալեգեցին միայն Քրիստոսի  
 խաչաւարչոյ մահը՝ այլ Նորա բոլոր Տօրե-  
 նու թիւնները կը յիշատակէ, ինչպէս դժոխք  
 իջնալը, երեքօրեայ յարու թիւնը, երկինք

համբառնալը , ընդ աջմէ Հօր նաաիլը , և  
 Նորա փառաւոր միւսանգամ գալուստը : Այս  
 բոլոր Տնօրէնու թեանց յիշատակու թիւնը ը  
 նեւով Առաքելոյն խօսքին հակառակը ըրած  
 չըլլար , այլ անոր փափաքը կը կատարէ . վասն  
 որոյ սուրբ Ալկեղեցին Տնօրէնու թիւնները  
 բանիւ հաջակելէն դատ , յասուկ յատուկ  
 արարողու թիւններով անոնց ամէնը իրօք  
 կը ներկայացնէ՝ հաւատացելոյ աչաց սաջե  
 ւը աւելի ազդու գործելու . բանցի Պատու  
 բազմամասոյց քահանային ամէն մէկ շարժ  
 մունքները Աստուծոյ սեղանին սաջել . մէկ  
 մէկ նշանակու թիւն ունին իրենց մէջը . Քր  
 իստոսի փրկաա իմ Տնօրէնու թիւնները յի  
 շատակելու , և այս եղանակաւ պիտի շարու  
 նակէ Ալկեղեցին մինչեւ Քրիստոսի երկրորդ  
 գալուստը . բանցի սուրբն Պօղոս ըսաւ Աւե  
 տարանայ համաձայն , «Օ մահ Տեառն պատ  
 մեցէք մինչեւ եկեացէ՛ Նա » : Աւ ահա՛ Տէրն  
 մեր ալ այս խորհուրդը հաստատելէն ետքը  
 անմիջապէս իւր երկրորդ գալուստը յիշեց .  
 «Կայց ասեմ ձեզ ոչ եւս արբից յայսմ հե  
 տէ՛ ՚ի բերոյ որթոյ մինչեւ ցօրն ցայն՝ յոր  
 ժամ արբից զդա ընդ ձեզ նոր արքայու թեան  
 Հօր իմոյ » : Այս մտօք Շնորհալին ալ  
 Այսօր անձառին մէջ ՚ի դիմաց Քրիստոսի  
 խօսելով կը հաստատէ . «Օ որ յիշատակ իմ  
 առնիցէք մինչեւ եկից ես միւսանգամ » :

Վառքեղաց խօսքէն շատ ճիշտ կը հետեւցնէ ,  
 մեր սուրբ Վառքեղացի անդուգական Մեծ  
 Քահանայապետը՝ Յաճախապատու մ գրքին  
 մէջ . ԳԼ . ԺԳ . եր'' . 165 . Թէ՛ « Հաղորդին  
 Սարմնոյ և Նրեան փրկչին գրաւական է  
 յուսոյ փառաւոր յարութեանն : Վասն զի  
 եթէ հրամայեմք՝ յուտելն և յրմայելն պատ-  
 մել զմահ Տեառն , և զփառաւոր գալուստն  
 Նորա . ընդ նմին և յիշեմք և զմեր յարու-  
 թիւնն . և զի որպէս Նրիւնաւոր մահ Նորա  
 շահեցաւ մեզ զյարութիւնն , նայեպէս Նա-  
 բիւն մահ Պատարագին ներգործէ՛ ՚ի մեզ ըզ-  
 նայն յարութիւնն » :

Աւաճա՛ այս խորհուրդին մատուցմանը՝  
 յիշատակութիւն ալ՝ հաշակումն ալ կըսուի .  
 բայց զի՛նչ հաշակել . Քրիստոսի ՚ի Վողգո-  
 Թայ մատուցած Պատարագը , որ խաչին սե-  
 ղանին վերայ բեւեռաւելով կատարեաց : Աւ  
 Պատարագ ալ կըսուի , որովհետեւ խաչին  
 Պատարագին իրական ներկայութիւնն է , և  
 անկից զատ բան մը չէ . անկից էտիան տար-  
 բերութիւն մը չունի . վասնորոյ այսօր եթէ  
 կուզեմք Վատուծոյ հետ Քրիստոսով հաշ-  
 աւելի , պէտք է սուրբ Պատարագին առջեւ  
 կայնիլ իբրեւ թէ ՚ի սուրբ Վողգոթայ եղած  
 ըլլայինք . Վարիամ Վագթաղե՛նացիին պէս .  
 ինտոր որ նա խաչին ախրով փարեցաւ , և ան-  
 կից զատուել չուզէց . արժան է այն հաւատ-

քով և աներկբայ յուսով և անկեղծ ակրով  
մեզ ալ կայնիլ, և խաչեալ Պատարագեալ  
Փրկչէն խնդրել, որ հաշտեցնէ զմեզ իւր Պա-  
տարագին արեամբը Հօր Աստուծոյ հետ և  
մեր բաղմատեսակ մեղացը թողութիւն չը-  
նորհէ :

Հ. Այս սորվեցուցածներէդ կը հետեւի  
որ Պատարագի սուրբ խորհրդեանը մէջ եր-  
կու բան կը պարունակուի. մէկը՝ Քրիստոսի  
Տնօրէնութիւններուն յիշատակութիւնն է,  
որ Պատարագ ալ կըսուի, և միւսը՝ Քրիստոս-  
սի Տնօրէնութիւնները ներկայացնող յիշեցը-  
նող խորհրդեան հացին և գինւոյ ճշմարիտ  
Մարմին և Արիւն Քրիստոսի ըլլալը :

Պ. Տարակուսութեան արժանի բան չէ  
այս. շատ էակներու մէջ կը տեսնուի, որ  
բոլոր երեւութին մէկ են, բայց այն մէկին  
մէջ բազում այլ և այլ գաղափար ունեցող  
մարմիններ կան. զոր օրինակ, մարդուն ան-  
ճը մէկ է. բայց մարմին և հոգի կը պարու-  
նակէ իւր մէջը, որ կ'սուի՝ մարդն բաղկաց-  
եալ է 'ի հոգւոյ և 'ի մարմնոյ. և եթէ զըն-  
նելու որ ըլլամք՝ մէկ մարդուն վերայ շատ ե-  
րայ գաղափարներ կը գանես. ինչպէս կեն-  
դանութեան, բանականութեան, մարմնեղի-  
նութեան, թանձրութեան, տարածութեան  
ծանրութեան, սպիտակութեան, սեւութեան,  
թեւութեան, գեղեցիկութեան, տգեղութեան, ի-

մատու թեան, օգիտու թեան, կրթու թեան  
 և բարբարոսու թեան, այս ամէն գաղափար-  
 ներք մարդկու թեան վրայ կրնան տեսնուիլ.  
 ասպա ինչո՞ւ ճշմարտու թեան գէժ կերեւի,  
 ՚ի Պատարագի՝ Վարին և Վրիւն ալ պարու-  
 նակելը. շատ ճշմարտութիւններ կան՝ որոնք  
 ժամանակաւ մտքի գէժ կերեւային, բայց  
 ժամանակը և գիտութիւնը զանոնք ճշմար-  
 տու թեան հետ միացուցին:

Հ. Արքայան Վրաքեալը կրտէ, «Աւր  
 թողութիւն է՝ ոչ եւս պիտոյ է վասն մեղաց  
 Պատարագ». ասպա ինչո՞ւ համար հարկաւոր  
 է վերստին Պատարագ մատուցանել վասն  
 մեղաց թողութեան. Քրիստոս միանգամ ՚ի  
 Կողզոթաց Պատարագելովը՝ ընդհանուր աչ-  
 խարհի վրկու թիւն գործեց, «Քանզի միով  
 Պատարագաւ կատարեաց զսրբեալսն ՚ի մըշ-  
 արնջե՛նաւորս». ԵՔԷ. Ժ. 14: Ար բոլոր Ա՛-  
 դամաց և այսր եղողներսւն և յայսմհետէ  
 մինչ ՚ի կատարած աշխարհի հաւատացեալ  
 ներուն քաւութեանը համար բաւական է,  
 ուրեմն պէտք է ուրիշ Պատարագներ:

Պ. Ա՛յն, պէտք է միշտ և հանապաղ ըն-  
 Քրիստոս հռչակել Պատարագել ՚ի խորհրդ-  
 եան, որովհետեւ Վերն ըսաւ «Օայս արա-  
 րէք առ իմոյ յիշատակի». զի այս Պատարա-  
 գը ուրիշ բան չէ, բայց եթէ ՚ի Կողզոթաց  
 Պատարագին ներկայութիւնը. և մի և նայն

Պատարագ և մերձեցումն յայն՝ և ոչ այլ պատարագներ, վասնորոյ այժմեան մատուցեալ Պատարագէն քաւութիւն և թողութիւն կը բաշխուի. Վողգոթայի Պատարագին մերձեցումն ընդունն համար, այն Պատարագին հետ միտ թիւն ունենալուն համար, և աւելի պարզ խօսելով Վրիստոսի արիւնասեղ Պատարագին պատճառաւ աշխարհի շնորհուած քաւութեան հաղորդ ըլլալ, այսու սուրբ անարիւն Պատարագաւ:

Ի այց Վողոսի խօսքը ոմանք ծուռ խմանալով՝ ու թիւք մեկնելով հասկցան, թէ՛ ալ պէտք չէ քաւութեան համար Հայր և Վինեաւ պատարագել: Հին օրինաց մէջ Սովետսի ժամանակ Վետական քահանայութիւնը զոհ կը մատուցանէր, դառն, ոչխար, նոխազ, և զուարակ, ժողովրդեան գործած անպիտու թեանը և մեղացը համար, անոնք ալ կատարելապէս չէին կրնար մաքրել սրբել ժողովրդեան մեղքերը, ինչպէս գրուած է. Եբ. Ժ. 11. «Վմենայն քահանայապետ կայ հանապազորդ ՚ի պաշտաման, և զնոյն պատարագս մատուցանէ բազում անպամ, որ ոչ երբէք կարող են բառնալ զմեղս»: Նոյն հին օրինաց զոհերը զոր քահանայապետ կը մատուցանէր՝ մարդկային բնութեան վրայ ճանրացած Վդամային դատակնիքը վերցրնելու բաւական չէր, վասնորոյ Վրիստոս

աշխարհ եկած ժամանակը՝ այն հին օրինաց  
 անդօր պատարագները վերցուց իւր մարմնայն  
 Պատարագաւը . քանզի ճշմարտութիւնը Նիքն  
 եկած ժամանակը՝ աւելորդ էր ստուերին մը-  
 նալը . այլ պէտք էր վերցուիլ , « Օլա աջինն  
 մերժէ՝ զի զերկրորդն հաստատեցէ » , ԱԷԸ .  
 Ժ . 9 : Օրինակ ալ կը բերէ Նաւիթի Մաղ-  
 մսէն , « Նիգ զոհս և ընդ պատարագս և ընդ  
 սղջակէ զս և ընդ վասն մեղացն ոչ հաճեցար  
 և ոչ կամեցար որք ընդ օրինացն մատչիին .  
 « անդ 8 , համար : Հին օրինաց անդօր պա-  
 տարագներուն բառնալի ըլլալուն համար խօ-  
 սելէն ետքը կը հետեւցնէ » . « Իսկ ուր թու-  
 զութիւն է , ոչ եւս պիտոյ է վասն մեղաց  
 պատարագ » . համար 18 : Յայտնի է որ պէտք  
 չէ ըսածը հիներուն համար է : Իսկ պիտի  
 հարցնե՞ս՝ որ հին պատարագները ալ պէտք չէ  
 ըսաւնէ Պօղոս , նոր պատարագի սահմանադ-  
 րութիւնը ըրաւ . (կրտմք) Քրիստոսի ըրած  
 սահմանադրութիւնը աւանդեց : Արտհետեւ  
 Քրիստոս Տէրն մեր ըսաւ « Առէք կերպք  
 այս է Վարմին իմ . . . Արքէք ՚ի դմանէ այդ  
 է Արիւն իմ նորոյ ուխտի , որ ՚ի վերայ բազ-  
 մաց հեղու ՚ի թողութիւն մեղաց » . ահա  
 այն միջոցին իւր Վարմինը և Արիւնը ՚ի քու  
 ութիւն մեղաց Արկտոսասանից տուաւ , ու  
 ետքը խաչեցաւ քառաթեւին վրայ իւր սր-  
 իւնը թափեց բոլոր մարդ կանց քաւութեանը

համար . ասկից կը հեանելի՝ որ խաչին պատարագին հետ մի և նոյն էութիւն ունէր ընթրիքին ըրած Պատարագն ալ , թէ և տարբեր և զատ կերտելին արտաքուստ , այլ իրօք և էութեամբ մի և նոյն են , և ՚ի ներքուստ հոգեւորապէս միութիւն ունենալիուն համար՝ ընթրեաց խորհուրդին ալ Պատարագ կըսուի :

Հ . Հացիւ և Վինեաւ պատարագելը չի տեսնուած բան չէ՞ արդեօք , բանդի ընդհանրապէս սուրբ անասնոց զոհուիլը տեսնուած է ՚ի հինս :

Պ . Այլ չիտեսնուած բան չէ . անասուններէ զատ ուրիշ պատարագներ ալ տեսնուած է . երբոր ասկաւին աշխարհի մէջ ՚ի սկզբուն մէկ բանի հոգի կային , որք էին Վրամ Վււայ Վայեն և Վրել , և անոնց հարմեւրը . այն երկու եղբարց մէջ տարբեր պատարագներ տեսնուեցան , որոնցմէ Վայենը ցոքենի որայն կը պատարագէր , և Վրելը խաչանց ընտիրները :

Մեւթիսեղեկ քահանայն ալ Հացիւ և Վինեաւ կը պատարագէր . ինչպէս որ գրուած է յայտնի Վասուածաշունչի Օննոցոց դրոյն մէջ . ԺԴ . 18 . « Եւ Մեւթիսեղեկ արքայ Շաղեմայեհան Հաց և Վինի » : Հաց և Վինի հանելուն պատճառն ալ կը հեանեցնէ ըսելով , « Քանզի քահանայ էր Վասուծոյ բարձր

րելոյ ։ Արովհետև քահանայու թիանէ ու թե-  
 նէն է պատարագ մատուցանելը , առանց զոհի  
 քահանայ չլլար . Եւ լքիսեղեկալ նայնպէս ըրաւ .  
 առաջ Հացիւ և Վինեաւ պատարագեց ու  
 օրհնեց զԱբրահամ սուրբ նահապետը . ըսե-  
 լով « Օրհնեալ է Աբրահամ յԱսուծոյ  
 բարձրելոյ ։ Բեղի կը հարցնեմ հիմայ , ի՞նչ  
 պատճառաւ Քրիստոս քահանայ կոչեցաւ  
 ըստ կարգին Եւ լքիսեղեկի , և ոչ ըստ կար-  
 գին Ահարոնի . ոչ ասլաքէն Նքն հաստատեց  
 Վետական քահանայու թիւնը , որ անասուն  
 ներ զոհելով քահանայական պաշտօննին կը  
 կատարէին . սուրբ Պողոսի խօսքերէն յայտնի  
 է՝ որ Մալսիական զոհերը պիտի դադարէին ,  
 և անոր տեղ Քրիստոսի քահանայու թիւնը  
 պիտի փոխանորդէր և ի ձեռն փոխանորդաց  
 պիտի շարունակէր , որ հաստատեց Հացիւ և  
 Վինեաւ Պատարագել ըստ օրինակի Եւ լքի-  
 սեղեկեան Պատարագին . վասնորոյ կոչեցաւ  
 ի սուրբ Բաւիթ մարգարէէն , « Արդուաւ  
 Տէր և ոչ ևս զղջացի , թէ դու ևս քահա-  
 նայ յաւիտեան ըստ կարգին Եւ լքիսեղեկի  
 և Տէր ընդ աջմէ քու մէկ » : Պողոս ալ ան-  
 ուանեց զՅիսուս Քրիստոս « քահանայապետ  
 յաւիտեանից ըստ կարգին Եւ լքիսեղեկի » :  
 Կըսէմս Աղէքսանդրացին ալ՝ որ երրորդ դա-  
 րուն հեղինակներէն մէկն է , Ասուածաւ  
 շունչին և սուրբ Աւետարանին խօսքերը այս

պէս կը բացատրէ, Քրիստոսի եկեղեցւոյն հաւատոցը անաշտապէս հետեւելով, «Թաղաւոր Սաղիմայ Քահանայ Աստուծոյ բարձրեւոյ՝ զՎինի և զՀայ սուրբ եւ ի կերակուր յօրինակ Հաղորդութեան» :

Սուրբն Պօղոս բաղդատու թիւն մ'ալ կը նէ. Քրիստոսի մեծի հինգ շաբաթի օրը հաստատած Հաղորդութեան Խորհրդոյն Պատարագ ըլլալը հաստատելու համար, թէպէտ և այս մեր գործածած Պատարագ բառը չէ գործածեր Մեթրեաց սուրբ սեղանը կուսոյ զուհի սեղանին հետ բաղդատած ժամանակը. սակայն զօրութեամբ կիմացնէ՝ կրնի. Ժ. 18. «Տեսէք զՎարացէն ըստ մարմնոյ, ոչ առ պաքէն որ ուտեն ի զոհնոցն հաղորդ են սեղանուոցն. իսկ արդ զն՝ ոչ ասեմ, եթէ զոհեալն իցէ ինչ, և կամ թէ կուռքն իսկ իցնն ինչ. այլ զոր զոհենն հեթանոսք՝ դիւայ և ոչ Աստուծոյ զոհեն. ոչ կամիմ զձեզ հաղորդս դիւայ լինել. քանզի ոչ կարէք զբաժակ Տեառն ըմպել և զբաժակն դիւայ. և ոչ կարէք ի սեղանոյ Տեառն վայելել և ի սեղանուոյ դիւայ» :

Արչափ յարմարագոյն Պատարագին սեռէն բերուած օրինակ մը, եթէ այս Հաղորդութեան Խորհուրդը զոհ ալ չըլլար և Քրիստոսի խաչելու թեանը իրական ներկայութիւնը չլինքեան չիքովանդակէր, և այս սուրբ սեղանը

զանինն վերայ Պատարագեալ Քրիստոսի  
 Կարմնոյ և Արեան Հաղորդութեան Քրիստոսի  
 հետ հաղորդ ջրլար չ՝միանար . Առաքելոյն  
 բերած օրինակը բոլորովին անյարմար կ'ըլլար .  
 « Բանզի ոչ կարէք ՚ի սեղանոյ Տեառն վայելել  
 և ՚ի սեղանոյ դիւաց » , կ'ըսէ : Ասկից կը  
 հետեւի որ ինչպէս որ դիւաց սեղանը՝ զոհ  
 հի պիղծ սեղանն է , այսպէս ալ Քրիստոսի  
 Կարմնոյ և Արեան սեղանն ալ Քրիստոսի  
 Պատարագին կամ զոհին սուրբ սեղանն է .  
 և էութեամբ զօրութեամբ Կողգոթայի սեղանն է .  
 և ոչ թէ որիչ այլ իմն պատարագ է՝  
 էութեամբ և բնութեամբ՝ տարբեր ՚ի  
 մարդկանէ հնարեալ , այլ ՚ի Քրիստոսէ հաս-  
 տատեալ :

Հ . Արեւի է արդեօք պարզ բացատրու-  
 թիւն մ'ալ տրուիլ բաւական յայտնող վե-  
 ռի բացատրու թիւններուն նման , որ աւելի  
 պարզուի , թէ Քրիստոսի Հաղորդութեան  
 սահմանադրութիւնը Կողգոթայի Խաչի պա-  
 տարագին հետ էութեամբ զօրութեամբ մի  
 Պատարագ է :

Պ . Այն կայ աւելի պարզ բացատրու-  
 թիւն մ'ալ , սուրբ Աւետարանչաց բացայայտ  
 խօսքերը մէկզմէկու հետ բաղդատելով յայտ-  
 նի կը տեսնուի . Վատթէոս Հաղորդութեան  
 խորհրդոյն պատմութիւնը ըրած ժամանակը ,  
 այսպէս կը գրէ . « Ալ մինչդեռ ուտէին նո-

քաւն Յիսուս Հայ օրհնեաց և եբեկ և  
 եւտ աշակերտացն և ասէ . Առէք կերայք այս  
 է Վարժին իմ : Եւ ասեալ Մաժակ գոհա  
 ցաւ՝ եւտ նոցա և ասէ , Արբէք ՚ի դմանե  
 ամենեքին : Օ՛ի սոց է Արիւն իմ նորոյ ուխ  
 տի , որ ՚ի վերայ բաղմաց հեղու ՚ի թողու  
 թիւն մեղաց : Առկաս տարբեր կերպով  
 մը կը խօսի՝ այս նիւթիս վրայօք . « Եւ ըն  
 կալեալ Մաժակ գոհացաւ և ասէ . Առէք  
 զայդ և բաժանեցէք ՚ի ձեզ . . . : Եւ  
 ասեալ Հայ գոհացաւ եբեկ և եւտ նոցա՝ և  
 ասէ . Այս է Վարժին իմ որ վասն բաղմաց  
 տուեալ . . . : Այնպէս և զբաժանին  
 յեւտ Միթրեացն աւ և ասէ . Այս բաժակ  
 է նոր ուխտ իմով արեամբ վասն ձեր հեղ  
 լոյ » : Ահա այս խօսքերուն մէջ եղած տար  
 բերու թիւնը . Վասն թէս ըսաւ . « Ար վասն  
 բաղմաց հեղու ՚ի թողու թիւն մեղաց » .  
 Առկաս ըսաւ , « Այս բաժակ է նոր ուխտ  
 իմով Արեամբ վասն ձեր հեղոյ » : Այսինքն  
 ըսել կուզէ թէ՛ ո՞ սուրբ Առաքեալներս՝ եւ  
 այժմ ձեզի նոր ճշմարիտ ուխտ մը պիտի  
 հաստատեմ փոխանակ այն ստուերական ուխ  
 տին գառնադեմութեան , որ իմ խաչելու  
 թիւնս կը նշանակէր , Այս ուխտը իւր մէջ  
 ճշմարտութիւն կը պարունակէ . չէ թէ իբ  
 րև օրինակ մը և նշանակ մըն է հին օրինաց  
 ուխտին պէս . հին օրինաց ուխտը գառնադե

նութիւնն և ուրիշ զոհարարութիւններն  
 էին, որ խաչելու թեամբ արիւն թափելս կը  
 նշանակէին. և Վաղարշակեաց արարողու-  
 թիւնն ալ, այժմ և Վարմնոց և Արեանա ընդ-  
 ակասկաւ Հայի և Վինւոց ձեռ տալս կը  
 նշանակէր. բայց ես ձեռի նշանակներուն տեղ  
 նշանակ և օրինակ չեմ տար, այլ ճշմարտա-  
 պէս Արիւնա և Վարմինա, որ այժմ 'ի Խոր-  
 հրրդեան ձեռի համար կը թափեմ, «Իմով  
 արեամբ վասն ձեր հեղոց». և 'ի խաչին ա-  
 մենեցուն և բաղմաց համար, «Վասն բաղ-  
 մաց հեղու 'ի թողութիւն մեզաց»: Ասկից  
 ուղիղ կը մակաբերուի, որ խորհրդականն ա-  
 նարիւն Պատարագը՝ և արիւնաւ որ զենու մը  
 'ի խաչին՝ ըստ էութեան մի և նոյն Պատա-  
 րագ էր, որ հաստատեց. թէ և առջինին մէջ  
 միայն չարչարանք մը պակաս է: Այս բանիս  
 համար եկեղեցին Բրիտանի 'ի Խորհրդա-  
 ակարի՝ Աւետարանչաց գործածած բառերը  
 շատ զգուշութեամբ և հասուն Խորհրդով  
 գործածեր է, «Առէք կերէք այս է Վարմին  
 իմ, որ վասն ձեր և բաղմաց բաշխի 'ի բա-  
 ւութիւն և 'ի թողութիւն մեզաց»: Վասն  
 ձեր՝ սուրբ Նաւհասին գործածած բառն է,  
 «և բաղմացը՝ Վասթեասինն է. և 'ի Խոր-  
 հրրդակարիին նախադաս դրուած է «վասն  
 ձերը»: Բանզի յառաջագոյն խորհրդաբար  
 Պատարագեցաւ մասնաւորապէս Արկուստաւ

նից համար, և անոնց մեղաց թողու թիւն  
 շնորհեց՝ իւր Վարմնոյ և Վրեան մատակա-  
 րարու թեամբը, և ապա ՚ի Խաչին վասն բո-  
 վանդակ աշխարհի: Վսկից լաւ հասկցուեցաւ  
 սր մի և նոյն զօրու թիւնն ունին, վասնորոյ  
 ինչպէս որ Խաչի պատարագին զոհ կրսուի,  
 անպատճառ զոհ ըսելու է՝ անարիւն զեմանն  
 համար ալ, թէպէտ և պատարագ կամ զոհ  
 բառը, ներգործու թեամբ գործածուած չէ,  
 բայց վերոյգրեալ սուրբ Վրոց իմաստներէն  
 անխուսափելի կերպով մը կը մակարեբուի  
 Պատարագ բառին հարկաւորու թիւնը:

Յիրաւի սուրբ Վրոց մէջ « համագոյակից »  
 բառն ալ ներգործու թեամբ գործածուած չէ  
 Վրիտոսի վերայ, սակայն սրովհետեւ կերե-  
 ւին սուրբ Վրոց խօսքերէն մի և նոյն հաւա-  
 սարապատիւ իշխանու թիւն թագաւորու թիւն  
 և էու թիւն ունե՛նալը Վրիտոսի Հօր Վա-  
 տուծոյ հետ, վասնորոյ պէտք եղաւ որ՝ Վր-  
 յիտոսի եկեղեցին՝ որ անաչառ անսխալ թարգ-  
 ման և մեկնիչ է սուրբ Վրոց՝ վէճը դադրե-  
 ցընելու համար (որ Վրիտոսի պատճառաւ կը  
 յուզվէր) ներգործու թեամբ Վրիտոսի հա-  
 մար « համագոյակից » բառը գործածէ: Վ. յԺ-  
 մեան աղանդաւորաց պէս Վրիտոս ալ կը հա-  
 կառակէր, թէ սուրբ Վրոց մէջ « համագո-  
 յակից » բառ չիկայ, որպէս զի անոնց վրայ  
 իրեն խարդախու թիւնները բանեցնէ, սակայն

ճարք չիկրցաւ դանել Քրիստոսի եկեղեցին  
 խորխորատի մէջ գլտորելուն . քանզի ըսաւ  
 Տէրք, « և գրուեալք դժոխաց զՆ, ա մի յաղթա-  
 հարկեացեն » :

Ահա Պարոն . Հոգւոյն սրբոյ ընթերակայու-  
 թիւնը որչափ որ օգնեց մեր ակարու թեանը՝ ըստ  
 հայցուածոցդ դրեցի . փոքր ճաշակ մը տալով  
 թէ բոլոր եկեղեցւոյ հաւատալիքները սուրբ  
 Նրոց աղբիւրէն բզխած է և առաւել լու-  
 սաւորուած իմաստալից բացատրութեամբ .  
 փոքր ճաշակ տալ ըսի , որովհետեւ տակից ա-  
 ւելի շատ վկայութիւններ կան խորհրդոյս  
 նիւթոյն բացատրութեանը՝ ի սկզբանէ անտի  
 եկեղեցւոյն Քրիստոսի մինչեւ ցայսօր , որ ե-  
 կեղեցւոյ որդւոցը միաքերբ լուսաւորելու  
 լաւ ծառայութիւն կրնեն , թէ ՚ի սուրբ Նը-  
 բոց և թէ ՚ի բացատրութեանց նախնի սրբա-  
 զան Հարց . և անկարելի է դանտել անոնց մէջ  
 Վաչու ինեանց նպատաւատոց վկայութիւն մը .  
 որովհետեւ Վուտեր և Վաչու ին միայն սկզբ-  
 նաւորութիւն մ՝ ըրին սուրբ Աւետարանի բա-  
 ցայայտ վկայութիւնները՝ որ կենարար Հա-  
 ղորդութեան և սուրբ Պատարագի համար  
 գրուած է , այլաբանական և տարբեր տար-  
 բեր իմաստներով իմանալ բոլորովին անսիա-  
 բան մէկզմէկու , և ըսել թէ եկեղեցին Քր-  
 իստոսի սխալեր է և ուղիղ չէ հասկցեր ՚ի

Քրիստոսէ մինչեւ Առաքելք և Ապոստոլսն և  
Օրսն գլխոս . որ է յայտնի չարախօսութիւն  
Քրիստոսի խնամաւորութեանը և ամենակարօ  
ղութեանը դէմ . քանզի ասկից կը հետեւի  
թէ՛ ուղիղ չկրցաւ հաստատել Քրիստոս իւր  
եկեղեցին՝ և չկարողացաւ կառավարել անար  
խալ գծի մը վրայ , և ՚ի զուր խոստացաւ իւր  
ներկայութիւնը ըսելով , « Աս ընդ ձեզ եմ  
ղամենայն աւուրս մինչեւ ՚ի կատարած աշ  
խարհի » : Աւ յոչ ինչ պէտա խոստացաւ ա  
ռաքել զիւր համագոյակից փառակից սուրբ  
Հոգին , ըսելով « Աս ընդ ձեզ բնակեսցի և  
ընդ ձեզ եղիցի ՚ի յաւիտեան » : Աւ արդ՝ ոչ  
սպաքէն իւր հաստատելու եկեղեցին անար  
խալ պահելու խոստացաւ ըսելով « Շինեցից  
զեկեղեցի իմ , և դրունք դժոխաց զԱս մի  
յաղթահարեսցեն » : Աթէ այս եկեղեցի բա  
ռը նիւթականը խնամաւոր , թշնամիները զա  
նի կարողացան քայքայելու հիմնայատակը  
նելու . եթէ զինուորեալ եկեղեցւոյն անդոր  
րութիւնը խնամաւոր , զանի վրդովեցին հալա  
ծեցին և ՚ի սուր սուսերի մաշեցին՝ առանց  
յաղթահարել կարողանալու . այլ եկեղեցիին  
հաւատքը պիտի խնամաւոր հանդերձ հիմամբ  
և շինուածով , որ առանց արատց մոլորու  
թեան անսխալ կը շարունակէ : Աւրեմն չու  
նիմք իրաւունք՝ Քրիստոսի հակառակ են ա  
նոնք ըսելու , որ Աւետարանական անուան

պատրուակաւ կեղծաւորեալ ճիշդ Աւետա-  
 րանին հակառակը կուղեն հաստատելու բու-  
 լորովին մարդկային իմաստութեան ապաւի-  
 նելով: Արաւունք չունիմք արդեօք, և ոչ ա-  
 պաքէն անժխտելի պարտականութիւն է ա-  
 նոնց մտաց լուսաւորութեանը համար աղօ-  
 թելու և նոյն կորուսեալ հոգիներուն զփրկ-  
 կութիւն մաղթելու. որպէս զի Հոգին ա-  
 ռատութեան երկնային՝ պարգեւաց ուղղե-  
 ցոյց ըլլայ մոլորութենէ հեռացնելու ու  
 ճշմարտութեան մէջ զանոնք հաստատելու.  
 քանզի անոնց հոգիքն ալ մեզ նման՝ Աստու-  
 ծոյ պատկերը ունին և մշտնջենաւոր փառաց  
 արքայութեան Աստուծոյ ընդունակ են. յա-  
 ւիտենականութեան մէջ անոնց Աստուածա-  
 յին բարկութեան մատնուիլը սոսկալի բան  
 է: Ահ, ի՞նչ աղետալից հարուած. այս բա-  
 րեմաղթութեան պարտականութիւնը մաս-  
 նաւոր անձի մը միայն չի վերաբերիր, այլ ա-  
 մէն մէկ հաւատացեալ քրիստոնէի, թերևո՞  
 գթայ Ամենողորմած երկնաւոր Փրկիչը՝ ու  
 նոցին հոգւոց իւր փրկութիւնը շնորհէ.  
 քանզի Նա միայն է միջնորդ փրկութեան և  
 ընդհանուր ազատութեան ազգի մարդկան:









84059







ՀՀ Ազգային գրադարան



NL0115034

